ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N /18.2/47838-2020 «22» 10 2020թ.

Ա/Ձ ՋԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆԻՆ

/ՀՀ, Արարատի մարզ, 0732, գ.Շահումյան, Գայի փ. 8; info@sevuni.am/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ կառավարությանը ենթակա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2020թ. ապրիլի 28-ին Վարչապետի աշխատակազմի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի (այսուհետ՝ Ա/Ձ) միջև կնքվել է ՈՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանը) ստանձնում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տեղեկատվական ցանցի տեղադրման, սպասարկման և համակարգչային ցանցի կառուցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Իսկ նույն կետի «ա» ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 01/15.2/6723-20 գրությամբ ներկայացված փաստերը, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 2020թ. ապրիլի 28-ին Ա/Ձ-ի հետ կնքված ՈՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/11-1 ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ա/Ձ-ի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն

որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՎԱՀԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Կատարող՝ գործերի կառավարչություն
Հեռ. 010 515-663